ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Շահումյան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Շահումյան	Ավագանու արտահերթ նիստ	15.01.2021թ.	12:30	**Շահումյանի** համայնքապետարան, համայնքի ղեկավարի աշխատասենյակ (գ.Շահումյան, 1 փող. 66)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. հունվարի 15-ին՝ ժամը 12.30-ին Շահումյան համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք համայնքի ավագանու հերթական նիստի

ժամը՝ 12.30

1. ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Է. Մանուկյան

2. ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

զեկուցող՝ Ս. Սոսյան

ՆԱԽԱԳԻԾ 01-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի և 17-րդ հոդվածի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**

Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2021թ-ի հունվարի 15-ի արտահերթ նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2021թ-ի հունվարի 21-ի թիվ 01 արտահերթ նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2021թ-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ 02-Ն

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՍԵՐԻՆԵ ՍՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

Շահումյան համայնքի 2021թ-ի բյուջեում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-5 հավելվածների:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - 87 047 800 /ութսունյոթ միլիոն քառասունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - **87 047 8**00 /ութսունյոթ միլիոն քառասունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 8 600 000 /ութ միլիոն վեց հարյուր հազար/ ՀՀ դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը - 117 014 400 /մեկ հարյուր տասնյոթ միլիոն տասնչորս հազար չորս հարյուր/ ՀՀ դրամ

այդ թվում՝

· վարչական բյուջեի մասով - **87 047 8**00 /ութսունյոթ միլիոն քառասունյոթ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 38 566 600 /երեսունութ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ **ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՍԵՐԻՆԵ ՍՈՍՅԱՆ